«ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՀՀ-04-2022

ք. Երևան «23» նոյեմբերի 2022 թ.

Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող՝ ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեն (այսուհետ՝ «Նվիրատու»), ի դեմս Նվիրատուի կանոնադրության հիման վրա գործող՝ գլխավոր քարտուղար Մ. Մարգարյանի, մի կողմից և «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ «Նվիրառու»), ի դեմս կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Կարեն Ղազարյանի, մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր»), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և գնման գործընթացը կազմակերպելու մասին» N 1641-Ն որոշման (այսուհետ՝ «Որոշում») պահանջների և Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի 08 բաժնի 02 խմբի 05 դասի 1168 Արվեստների ծրագրի «Մարզահամերգային համալիրի պահպանություն» թիվ 11010 դասիչով միջոցառման (այսուհետ՝ «Միջոցառում») իրականացման նպատակով Նվիրատուն պարտավորվում է սույն պայմանագրի N 4 հավելվածով սահմանված համամասնությամբ, սեփականության իրավունքով, Նվիրառուին անհատույց հատկացնել 284 568 300 (երկու հարյուր ութսունչորս միլիոն հինգ հարյուր վաթսունութ հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի չափով դրամաշնորհ (ներառյալ ԱԱՀ-ն), իսկ Նվիրառուն պարտավորվում է Միջոցառումն իրականացնել սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրով սահմանված աշխատանքների նկարագրությամբ (այսուհետ՝ «Աշխատանքներ»)՝ Որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված ժամկետներում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Նվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 ցանկացած ժամանակ ստուգել Նվիրառուի կողմից Աշխատանքների կատարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Նվիրառուի գործունեությանը,

2.1.2 որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ չընդունել կատարված Աշխատանքները կամ դրանց որևէ մասը՝ սեփական հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Նվիրառուից պահանջելու վճարել սույն պայմանագրի 4-րդ բաժնում նախատեսված տուգանքը,

2.1.3 առանց կատարված Աշխատանքների կամ դրանց որևէ մասի արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել Նվիրատուին պատճառված վնասները, եթե՝

ա. Նվիրառուն ժամանակին չի սկսում Միջոցառման իրականացումը, կամ Միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն չի կարող պատշաճ իրականացվել,

բ. Նվիրառուն երկու և ավելի անգամ խախտել է Միջոցառումով նախատեսված Աշխատանքների կատարման ժամկետները (դրանք նախատեսված լինելու դեպքում),

գ. կատարված Աշխատանքների արդյունքները չեն համապատասխանում Միջոցառմամբ սահմանված պահանջներին,

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում՝ պահանջել իրեն հանձնել անավարտ Աշխատանքների արդյունքները:

2.1.5. Նվիրատուն Նվիրառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Նվիրառուն համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև Նվիրառուի էլեկտրոնային փոստին:

2.2 Նվիրատուն պարտավոր է՝

2.2.1. կատարել Միջոցառման (դրա որևէ մասի) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.2.2. իրականացնել Միջոցառումով նախատեսված այլ աշխատանքներ,

2.2.3. կատարված Աշխատանքների մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն կատարված Աշխատանքները (կամ դրանց որևէ մասը) համապատասխանում են Միջոցառման և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.3 Նվիրառուն իրավունք ունի՝

2.3.1 կատարված Աշխատանքների կամ դրանց որևէ մասի արդյունքը Նվիրատուի կողմից ընդունվելու դեպքում՝ նրանից պահանջելու վճարել Նվիրառուին հասանելիք գումարները,

2.3.2 Նվիրատուի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել Նվիրառուին պատճառված վնասները:

2.4 Նվիրառուն պարտավոր է՝

2.4.1 իրականացնել Նվիրատուի կողմից տրամադրված գումարների հաշվառում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հանրային հատվածի կազմակերպությունների համար սահմանված հաշվապահական հաշվառման ստանդարտին համապատասխան,

2.4.2 սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Միջոցառմամբ և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշման 4-րդ կետի 13-րդ ենթակետի՝ Միջոցառման տարեկան արդյունքները Նվիրատուի կողմից ընդունվելուց հետո Նվիրառուն Միջոցառման իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2022թ.-ի դեկտեմբերի 23-ը, իսկ համաձայն «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ մասի՝ Դրամաշնորհի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների, իսկ ԱԱՀ-ի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

2.4.3 ապահովել Աշխատանքներում առկա թերությունների վերացման նպատակով Նվիրատուի կողմից տրված ցուցումների կատարումը,

2.4.4 սույն պայմանագրով սահմանված կարգով Նվիրատուին ներկայացնել Աշխատանքների կատարման մասին հաշվետվություններ, իսկ Միջոցառման ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն,

2.4.5 սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Նվիրատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6 աշխատանքների որևէ մասի կատարման մասին հաշվետվությունները Նվիրատուի կողմից հիմնավոր պատճառներով չընդունվելու դեպքում Նվիրառուն պարտավորվում է անվճար՝ Նվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.7 միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան՝ հիմք ընդունելով Որոշման 3-րդ կետով սահմանված դրույթները:

2.4.8 գնման պայմանագիրը կնքելուց 10-օրյա ժամկետում Կոմիտե ներկայացնել գնման պայմանագրերի պատճենները:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՈՐԵՎԷ ՄԱՍԸ ՆՎԻՐԱՏՈՒԻ ԸՆԴՈՒՆՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Աշխատանքները կամ դրանց որևէ մասը Նվիրատուի կողմից ընդունվում են դրա մասին սույն պայմանագրի N 3 հավելվածում բերված ձևի հանձնման-ընդունման արձանագրության Կողմերի ստորագրմամբ ու կնքմամբ, որի համար հիմք է հանդիսանալու շինարարական աշխատանքների հաստատված կատարողական ակտը, դրական եզրակացությունը և հանձնման- ընդունման արձանագրությունը:

3.2 Յուրաքանչյուր ամիս կատարման ենթակա Աշխատանքների կամ դրանց որևէ մասի ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրառուն կազմում, ստորագրում, կնքում և Նվիրատուին է ներկայացնում հանձնման-ընդունման արձանագրության օրինակը և 3.1 կետում նշված հիմնավորող փատաթղթերը:

3.3 Կատարված Աշխատանքները կամ դրանց որևէ մասը սույն պայմանագրի N 1 հավելվածով և Աշխատանքների կատարման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում Նվիրատուն 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում, կնքում և Նվիրառուին է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը:

3.4 Կատարված Աշխատանքները կամ դրանց որևէ մասը սույն պայմանագրի N 1 հավելվածով և (կամ) Աշխատանքների կատարման համար Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում Նվիրատուն 5 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրառուին է ներկայացնում Աշխատանքները կամ դրանց որևէ մասը չընդունելու պատճառաբանված գրավոր մերժում, մատնանշելով անհամապատասխանությունները և սահմանելով Աշխատանքների կամ դրանց որևէ մասի վերստին կատարման ողջամիտ ժամկետ:

3.5 Կատարված Աշխատանքները կամ դրանց որևէ մասը համարվում է Նվիրատուի կողմից ընդունված, եթե դրա հանձնման-ընդունման արձանագրությունը Նվիրառուից ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրատուն չի կատարում սույն պայմանագրի 3.3-րդ կամ 3.4-րդ կետերով նախատեսված գործողություններից որևէ մեկը:

3.6 Կատարված Աշխատանքների կամ դրանց որևէ մասի հետ կապված վերջնահաշվարկները Կողմերի միջև կատարվում են (շինարարական աշխատանքների կատարման ավարտական ակտի առկայության դեպքում) յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով (համաձայն հավելված 5՝ «Նախահաշվի»):

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրով և Միջոցառումով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը դրանով սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ: Ընդ որում, տուգանքի վճարումը Նվիրառուին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նվիրատուն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Նվիրառուին վճարվելիք գումարներում:

5. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

5.1 Նվիրատուն Միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

5.2 Մոնիթորինգն իրականացվում է Նվիրատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

5.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Նվիրառուին տրվում են ցուցումներ, և ներկայացվում են առաջարկություններ:

5.4 Նվիրատուն ցանկացած ժամանակ կարող է Միջոցառման շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Միջոցառմանն առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

5.5 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Նվիրառուից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է այնպիսի արտակարգ ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Նման իրավիճակներ են հանդիսանում մասնավորապես՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, զանգվածային հասարակական անկարգությունները, գործադուլները, հաղորդակցության համակարգերի աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով Կողմերի պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունն անընդմեջ շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծել սույն պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված Միջոցառումը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2 Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

8.3 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված վեճերը և սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.4 Սույն պայմանագիրը կազմված է 7 թերթից և 11 թերթ հավելվածներից, կնքվում է երկու հավասարազոր օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմին:

9. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

Նվիրատու՝ Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող՝ Պետական գույքի կառավարման կոմիտե, ՀՎՀՀ 02528489, հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն հ/հ 900011041267:

Նվիրառու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ, ՀՎՀՀ 00144572, հասցե՝ ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն հ/հ 900018002825:

Նվիրատու՝	Նվիրառու՝
_____ Մ.Մարգարյան	_____ Կ. Ղազարյան
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված N 1
«Պետական սեփականություն հանդիսացող շենքային
պայմանների բարելավում» դրամաշնորհի
«08» նոյեմբերի 2022 թ.
N ՄՀՀ-04-2022 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1 հասցեում գտնվող Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայանալիք «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային 20-րդ հոբելյանական մրցույթի կազմակերպան համար անհրաժեշտ վերանորոգման աշխատանքների ապահովման

1. Վերանորոգման շրջանակում պահանջվող աշխատանքների (ներառյալ նյութեր) իրականացում,այդ թվում՝

Հ/Հ	Անվանում	Աշխատանքի նկարագրություն
1	Համերգային դահլիճի գրպաններ (աջ և ձախ կողմեր), որոնք ծառայելու են որպես պատվիրակությունների վարսահարդարման և դիմահարդարման տարածքներ	Ամբողջական վերանորոգում (հատակ, պատեր, առաստաղ) և լուսավորության ավելացում, հոսանքի վարդակների վերանորոգում կամ փոխարինում:
2	Համերգային դահլիճի բեմի խորքային հատված և բուն բեմ: Ծառայելու է որպես պատվիրակությունների հիմնական սենյակների տարածք: Բեմի հատվածը մինչև նստատեղերի հատվածի կեսը, ծառայելու է, որպես Bubble Room	Անհրաժեշտ է կառուցել սենյակներ, ինչպես նաև երկարացնել բեմի հատվածը՝ հեռացնելով նստատեղերի մի մասը: Հատակի ամբողջ մակերեսը պետք է ծածկել արհեստական գորգով:
3	Պատվիրակությունների հիմնական մուտք, անվտանգության հիմնական կետ և տվյալ տարածք ապահովող մուտք	Ամբողջական վերանորոգում՝ (հատակ, առաստաղ, պատեր), լուսավորության ավելացում, հատակի հավասարեցում, տաքացուցիչների համար անհրաժեշտ հատվածների կառուցում: Դրսի կողմից մուտքի հատվածում **վրանի** կառուցում, էլէկտրական վարագույրի փոխարինում և եվրո դռների տեղադրում:
4	Պատվիրակությունների սպասասրահի, վարսահարդարման, դիմահարդարման և սրահների	Վերանորոգում՝ դռների և փականների, անհրաժեշտության դեպքում դռների փոխարինում, զուգարարանակոնքերի և լվացարանների ամբողջական փոխարինում:

	տարածքին մոտ գտնվող զուգարաններ	
5	Համերգային դահլիճի ետնամասի մուտք, 1-ին հարկ և աստիճանների կողքի սենյակ	Միջանցքի վերանորոգում, լուսավորում, ինչպես նաև հարակից սենյակի ամբողջական վերանորոգում:
6	Գլխավոր մուտքի աստիճաններ	Աստիճանների սկզբից ամբողջական փակում: Հնարավոր լուծում՝ գիպսակարդոն:
7	Մամուլի սենյակ	Վերանորոգում, թարմացում, ջեռուցման ապահովում:
8	Պրեսս զոնա	Վերանորոգում, թարմացում, ջեռուցման ապահովում:
9	Պրեսս զոնա գնալու հատված	Պատերի կոսմետիկ թարմացում:
10	Պրեսս զոնա և մամուլի սենյակ	Հարակից բոլոր զուգարանների վերանորոգում, կահավորում, դռների վերանորոգում:
11	Միջոցառման ընթացքում օգտագործվող աստիճաններ	Բոլոր բռնակների փոխարինում, թարմացում:
12	Շրջադարձային տրիբունա	Պատուհանների կառուցում տեխ. անձնակազմի համար:
13	Սպորտային դահլիճ	Առաստաղի վերանորոգում և ցանցապատում, որպեսզի քարերը չթափվեն:
14	Սպորտային դահլիճ	Բոլոր պատշգամբների ամբողջական, կապիտալ վերանորոգում:
15	Սպորտային դահլիճ	Աջ և ձախ պատշգամբներում, որտեղ կան հրահանգային սենյակներ, փորել անցքեր խողովակներ կախելու համար:
16	Սպորտային դահլիճ	Առաստաղից կախված երկար խողովակները պետք է ամրացնել, ազատել ավելորդ մետաղներից:
17	Սպորտային դահլիճ	Առաստաղից հանել ավելորդ քաշ ունեցող մետաղական տարրերը:
18	Բեմի աջ և ձախ գրպաններ	Ամբողջական, կապիտալ վերանորոգում:
19	ՇՀԿ-ի (ՊՏՇ) կանգնելու տարածք, տեխնիկական անձնակազմի արտաքին գրասենյակների հատված	Մետաղական ամուր պարիսպներով ցանցապատում, բիոզուգարանների տեղադրում:
20	Ետնաբեմի ետնամաս /միջանցքեր, միջանցքերին հարող անկյուններ	Միջանցքների կոսմետիկ վերանորոգում, լուսավորության ավելացում:

21	Ետնաբեմի զուգարաններ	Ամբողջական վերանորոգում, զուգարանակոնքերի, լվացարանների փոխարինում, դռների կողպեքների վերանորոգում, անհրաժեշտության դեպքում դռների փոխարինում:
22	Թվով 16 գրիմանոցներ	Կոսմետիկ վերանորոգում, ներսի զուգարանների և լվացարանների փոխարինում:
23	EBU-ի համար նախատեսվող դիտման սենյակ, որը մոտիկ է տնօրենի ընդունարանին	Կոսմետիկ վերանորոգում:
24	Խոհանոցի տարածք	Ամբողջական վերանորոգում, օդափոխության գերիզոր համակագի տեղադրում:
25	Գլխավոր մուտք	Վնասված լամպերի փոխարինում
26	Հանդերձարաններ	Ամբողջական և կապիտալ վերանորոգում, կախիչների մակսիմալ ավելացում, թվերի տեղադրում
27	Նախամուտքային դռներ	Դռների վերանորոգում, բացակայող մասերի ավելացում:
28	Նախամուտքեր	Օգտագործվող բոլոր նախամուտքերի վերանորոգում, բացակայող քարերի տեղադրում:
29	Դեպի օֆիսային տարածքներ տանող մուտք	Կոսմետիկ վերանորոգում, լուսավորում:
30	Տնօրենի ընդունարան տանող միջանցք	Վերանորոգում, լույսերի ավելացում
31	Ընդունարանի հարկի զուգարաններ	Վերանորոգում, զուգարանակոնքերի և լվացարանների փոխարինում:
32	Սպորտային դահլիճի մուտքեր	Մուտքերի վերանորոգում, էլեկտրական դռան փոխարինում, մալուխների համար անհրաժեշտ հատվածի փորում
33	Սպորտային դահլիճ	Վնասված նստատեղերի փոխարինում, տեղերի թվայնացում
34	Օգտագործվող դռներ	Միջոցառման համար օգտագործվող դռների վերանորոգում, արտաքին տեսքի բարելավում
35	2-րդ հարկի ծխարաններ՝ աջ և ձախ կողմերում	Դեպի դուրս գնացող դռների վերանորոգում, **վրանի** կառուցում, դրսում գտնվող տարածքի բարելավում, պակաս քարերի տեղադրում
36	1-ին հարկի՝ հանդիսատեսի համար նախատեսված զուգարաններ	Լուծել կոյուղու խնդիրը, վերանորոգել և կահավորել զուգարանները ամբողջությամբ:
37	Հիմնական մուտք	Բոլոր սյուների կոսմետիկ վերանորոգում
38	Ընդհանուր	Համալիրի հրդեհային համակարգի վերազինում

39	Համալիրի դրսի հատված	Դրսի լույսերի փոխարինում, աստիճանավանդակների վերանորոգում, եթե կա անհրաժեշտություն, դրսում գտնվող խողովակների, որոնց վրա կախված են դրոշներ՝ փոխարինում
40	Համալիրի դրսի հատված	Դեպի գլխավոր մուտք տանող ուղեփակոցի վերանորոգում կամ փոխարինում
41	Համերգային դահլիճի և ճեմասրահի միջնամասում համերգի մասնակիցների համար առանձնացված բուֆետի գոտի	Օդափոխության ժամանակավոր համակարգի տեղադրում:
42	Երկրորդական չորս մուտքեր	Երկրորդական չորս մուտքերի առաստաղների վերանորոգում, ասֆալտապատ տանիքների քանդում, բետոնապատում, ջրամեկուսացում, ասֆալտապատում
43	Տնօրենի աշխատասենյակ	Ամբողջական վերանորոգում
44	Համերգային և սպորտային դահլիճ	Համերգային և սպորտային դահլիճի դռների վերանորոգում
45	Գլխավոր մուտք	Գլխավոր մուտքի ջահերի հանում, լվացում, տեղադրում (2700 հատ)
46	ՄՀՀ ամբողջ տարածք	Վերանորոգումից հետո ամբողջական տարածքի մաքրում
47	Անվտանգության դրսի տնակ	Վերանորոգում
48	Գլխավոր ճեմասրահ	Գլխավոր ֆոյեյից մինչև համերգային դահլիճի աստիճաններ հասնող առանձնացող պատ սարքել, մինչև առաստաղ փակել: Նախընտրելի է գիպսակարդոն՝ երկկողմանի:
49	ՄՀՀ գլխավոր մուտքի ներքևի հատվածում գտնվող աստիճանների սկզբնամասի աջ և ձախ հատվածներում տեղադրված դրոշակաձողեր (флагшток)	Ներկում և վերանորոգում
50	ՄՀՀ գլխավոր մուտքի ներքևի հատվածում գտնվող աստիճանների սկզբնամասի աջ և ձախ հատվածներում տեղադրված դրոշակաձողերին (флагшток) ամրացված գովազդային վահանակներ և բաներային կարկասներ	Ապամոնտաժում

51	ՄՀՀ գլխավոր մուտքի ներքևի աստիճանների սկզբնամասում Կ.Դեմիրճյանի արձանը տեղադրելու համար նախատեսված բետոնային ծածկ	Ամբողջական քողարկում, քանի որ մինչև Եվրատեսիլի մեկնարկն արձանի տեղադրում չի նախատեսվում
52	ՄՀՀ գլխավոր մուտքի ֆասադի աջ և ձախ հատվածներում դեղադրված կապույտ՝ «Դրամարկղ» վահանակներ	Ապամոնտաժում
53	Սպորտային դահլիճ	Օդափոխության առկա համակարգի ստուգում և, ըստ անհրաժեշտության՝ վերազինում
2.	**Շինարարական աշխատանքների, շինարարական որակի տեխնիկական հսկողություն**	

Նվիրատու՝

Մ. Մարգարյան

Կ. S.

Նվիրառու՝

Կ. Ղազարյան

Կ. S.

Հավելված N 2
«Պետական սեփականություն հանդիսացող շենքային
պայմանների բարելավում» դրամաշնորհի
«03» նոյեմբերի 2022 թ.
N ՄՀՀ-04-2022 պայմանագրի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Աշխատանքների և դրանց գնահատման քանակական ցուցանիշների անվանումները	քանակ Ամիս
1	ՀՀ ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1 հասցեում գտնվող Մարզահամերգային համալիրի կառույցի ներքին վերանորոգման աշխատանքներ	Մինչև 2 ամիս (սույն թվականի դեկտեմբերի 20)
2	Շինարարական աշխատանքների, շինարարական որակի տեխնիկական հսկողություն	Մինչև 2 ամիս (սույն թվականի դեկտեմբերի 23)

Նվիրատու՝

Մ. Մարգարյան

Կ. Տ.

Նվիրատու՝

Կ. Ղազարյան

Կ. Տ.

Հավելված N 3
«Պետական սեփականություն հանդիսացող շենքային պայմանների բարելավում» դրամաշնորհի
«03» նոյեմբերի 2022 թ.
N ՄՀՀ-04-2022 պայմանագրի

Նվիրատու՝	**Նվիրառու՝**
Պետական գույքի կառավարման կոմիտե ՀՎՀՀ՝ 02528489 հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4 Հայաստանի Հանրապետության ֆի-նանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն հ/հ 900011041267	«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ, ՀՎՀՀ 00144572, հասցե՝ ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն հ/հ 900018002825:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N _____
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____»_____ 2022թ.
Պայմանագրի անվանումը՝ «Պետական սեփականություն հանդիսացող շենքային պայմանների բարելավում» դրամաշնորհի պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » 2022 թ..
Պայմանագրի համարը՝ _____
Նվիրատուն, ի դեմս Պետական գույքի կառավարման կոմիտեի գլխավոր քարտուղար Մարո Մարգարյանի, և Նվիրառուն, ի դեմս «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարեն Ղազարյանի, կազմեցին սույն արձանագրությունն այն մասին, որ ___.___.ի. 2022 թ.-ից մինչև ___.___.2022 թ. ժամանակահատվածում Նվիրառուն իրականացրել է վերը նշված պայմանագրով նախատեսված՝ ստորև թվարկած Միջոցառումները՝ պայմանագրով սահմանված ժամանակացույցում նշված ժամկետներում, իսկ դրանց արդյունքները համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրին.

Պայմանագրի շրջանակներում Նվիրառուն «___»_____ 2022 թվականից մինչև «___»_____ 2022թ. ընկած ժամանակահատվածում կատարել է հետևյալ Աշխատանքները.

N	Աշխատանքի համառոտ նկարագիրը	Աշխատանքի քանակական ցուցանիշները	Աշխատանքի կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազ. դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամա-նակացույցի)

	Ընդամենը	.....	.....		

Նվիրատու՝

_____ **Մ. Մարգարյան**

Կ. Տ.

Նվիրառու՝

_____ **Կ. Ղազարյան**

Կ. Տ.

Հավելված N 4
Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի
կարողությունների զարգացման դրամաշնորհի
2022թ.-ի նոյեմբերի 03 -ի
թիվ_ՄՀՀ-04-2022_ պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/հազ.դրամ/

N	Միջոցառման անվանումը	Նվիրառուին վճարման ենթակա գումարները
		Տարի
1	«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի» շենքային պայմանների բարելավում	284,568.3

Նվիրատու՝

Մ. Մարգարյան

Կ. Տ.

Նվիրառու՝

Կ. Ղազարյան

Կ. Տ.

Հավելված N

Մարզահամերգային համալիրի պահպանության
դրամաշնորհի 2022թ.-ի հունվարի ____ -ի
թիվ _____ 2022 պայմանագրի

«Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Մ Ե Մ»

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ _____ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

Պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից բյուջետային հատկացումների հաշվին իրականացվող ծախսերի 01 հունվարի 2022թ.-25 դեկտեմբերի 2022թ.-ի ընկած ժամանակահատվածի համար

1. Կազմակերպության անվանումը՝ **«Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ**

2. ՀՎՀՀ **00144572**

3. Փոստային հասցեն **ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1**

4. Կազմակերպության տեղաբաշխման մարզի կոդն ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման

5. ՀՀ պետական կառավարման լիազորված մարմնի անվանումը՝ **ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե**

6. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման ծածկագիր/բաժին, խումբ՝ **08 02 05**

7. Չափի միավորը՝ **(հազ. դրամ)**

Տողերի NN	Ֆինանսատնտեսական գործունեության դրամական միջոցների գոյացման աղբյուրների և դրանց հաշվին իրականացվող ելքերի (ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի)		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարեկան
	Անվանումները	Տնտեսագիտականծածկագիրը	Հաստատված նախահաշիվ	Հաստատված նախահաշիվ	Հաստատված նախահաշիվ	Հաստատված նախահաշիվ
Ա	Բ	Գ		6	9	12
	I. ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ					
	(տող 2112000+տող 2113000)		0.0	0.0	0.0	284568.3
2000000	այդ թվում՝	X				

2112000	**2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ**		**0.0**	**0.0**	**0.0**	**284568.3**
	որից՝	**x**				
2112300	*2.3. Ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից*	x	0.0	0.0	0.0	284568.3
2112310	2.3.1. ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, այդ թվում՝	733100	0.0	0.0	0.0	284568.3
	2.3.1.1. պետական բյուջեից,		0.0	0.0	0.0	284568.3
2112311	այդ թվում՝	x				
2112312	2.3.1.1.1. պետության կողմից պատվիրակված ծախսերի փոխհատուցում	x				**284568.3**
	II. ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ					
	(տող 1100000+ տող 4000000)		**0.0**	**0.0**	**0.0**	**284568.3**
1000000	այդ թվում՝	**x**				
	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ					
	(տող 1110000+ տող 1120000 + տող 1140000+տող 1150000+տող 1160000+տող 1170000)		**0.0**	**0.0**	**0.0**	**284568.3**
1100000	այդ թվում՝	**x**				
	2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ					
1120000	**(տող 1121000+ տող 1122000 + տող 1123000+ տող 1124000+ տող 1125000+ տող 1126000)**		**0.0**	**0.0**	**0.0**	**237130.8**
	այդ թվում՝	**x**				
1125000	***2.5. Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)***	**x**	**0.0**	**0.0**	**0.0**	**237130.8**
1125100	- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	425100	0.0	0.0	0.0	237130.8
	7. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ					
1170000	այդ թվում՝	**x**	**0.0**	**0.0**	**0.0**	**47437.5**
1172000	***7.2. Հարկեր, պարտադիրվճարներ և տույժեր, որոնք կառավարման տարբեր մակարդակների կողմից կիրառվում են միմյանց նկատմամբ***	**x**	0.0	0.0	0.0	47437.5
1172200	- Այլ հարկեր	482200	**0.0**		**0.0**	**47437.5**

Կազմակերպության տնօրեն _____ Կարեն Ղազարյան
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____ Լուսինե Բոյաջյան
(ստորագրություն)